# Մենք ծրագրում ենք Vermont-ով երթևեկելու նոր եղանակ:

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ. ԱՄԱՌ 2026 Թ.*

**VERMONT-Ի ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔԻ BRT ՆԱԽԱԳԻԾ**

Metro

# Բարի գալուստ:

*Մենք ուրախ ենք շարունակելու մեր համատեղ ճամփորդությունը և ստեղծելու այնպիսի տարանցիկ միջանցք, որը երկար տարիներ կբավարարի մեր համայնքների կարիքները:*

Metro

# Վարքագծի կանոններ

**Այս հանդիպման ընթացքում խնդրում ենք՝**

- Հարգել հանդիպման ներկայացման ձևաչափը
- Անջատել բջջային հեռախոսները
- Պահպանել զրույցի տոնը
- Հարգանքով վերաբերվել մյուս մասնակիցներին, համայնքի անդամներին, գործակալության ներկայացուցիչներին և Metro-ի անձնակազմին
- Կարող եք ձեր հարցերը հնչեցնել ներկայացման վերջում
    - Խնդրում եմ օգտագործել հարցերով քարտեր

# Այսօրվա օրակարգը

1. Նորություններ և թարմացումներ
2. Նախագծի նպատակը և անհրաժեշտությունը
3. Միջանցքի ակնարկ
4. Արագընթաց ավտոբուսային տրանսպորտի (Bus Rapid Transit, BRT) նախագծի ամփոփում
5. Անցած տարվա գործունեություն
6. Նախագծի վերաբերյալ վերջին թարմացումներ
    - Ձախ շրջադարձի և կայանման վերաբերյալ թարմացում
    - Կայարանի ձևավորման վերաբերյալ թարմացում
    - Metro արվեստ
7. Նախագծի ժամանակացույց
8. Շինարարության վերաբերյալ թարմացումներ
9. Հաջորդ քայլեր



# Metro-ով երթևեկելը շուտով ավելի դյուրին կդառնա

- Սովորական ուղեվարձ վճարող ուղևորներն այժմ կարող են Metro-ից օգտվելու համար հպել իրենց կրեդիտային կամ դեբետային քարտը, Apple Pay-ը կամ Google Pay-ը:
- Ուղևորները կշարունակեն ստանալ երկու ժամվա անվճար տրանսպորտային փոխադրումներ և ուղեվարձի սահմանաչափի առավելություններ՝ նույն քարտը կամ սարքն օգտագործելիս:
- TAP քարտերը կշարունակեն գործել և դրանք պետք է օգտագործեն զեղչված ուղեվարձից օգտվող և GoPass ուղևորները:
- Կրեդիտային կամ դեբետային քարտերով զեղչված ուղեվարձ վճարելու հնարավորությունը նախատեսվում է 2027 թ.:

# Ամառային հանդիպումների շարք

Metro-ն ունի Լոս Անջելեսում տեղաշարժվելն ավելի դյուրին դարձնելու ծրագիր

- Միացեք Metro-ին՝ մասնակցելով անձամբ կամ առցանց հետևյալ միջոցառումներից որևէ մեկին
- Բոլոր միջոցառումների ընթացքում կներկայացվի նույն տեղեկատվությունը

- Երկուշաբթի, օգոստոսի 10-ին, ժամը 18:00-ին (անձամբ)՝ Exposition Park-ում
- Երեքշաբթի, օգոստոսի 11-ին, ժամը 12:00-ին (վիրտուալ հանդիպում՝ Zoom-ի միջոցով)
- Երեքշաբթի, օգոստոսի 11-ին, ժամը 18:00-ին (վիրտուալ հանդիպում՝ Zoom-ի միջոցով)
- Հինգշաբթի, օգոստոսի 13-ին, ժամը 18:00-ին (անձամբ)՝ LA City College, Ուսանողական միություն
- Շաբաթ, օգոստոսի 15-ին, ժամը 10:00-ին (անձամբ)՝ Metro Talent Hub

# Հանդիպման նպատակը

- Կրկին կապ հաստատելու համար բոլորիդ հետ և տեղեկացնելու մինչ օրս Նախագծի շրջանակում իրականացված կարևոր աշխատանքների մասին
- Տրամադրելու թարմ տեղեկություններ ծրագրի նոր բաղադրիչների և (կամ) բաղադրիչների փոփոխությունների մասին
- Ձեզ տեղեկացնելու առաջիկա շինարարական աշխատանքների և շինարարության ժամանակացույցի մասին

# Նախագծի նպատակը և անհրաժեշտությունը

1

**Աճող ուղևորափոխադրումների շուկա.**

Կանխատեսվում է, որ միջանցքում հանրային տրանսպորտով ուղևորությունների բարձր մակարդակը շարունակելու է աճել. հանրային տրանսպորտից օգտվելու մակարդակը Վարչաշրջանի միջին ցուցանիշից բարձր է

2

**Երթևեկության պայմանների վատթարացում.**

Միջանցքի որոշ հատվածներում ճանապարհային գոտու սահմանափակ լայնությունը հանգեցնում է շահագործման հետ կապված խնդիրների ավելացման, մարդկանց տեղաշարժի ոչ արդյունավետ կազմակերպման և անվտանգության նվազման

3

**Հանրային տրանսպորտի հուսալիության վատթարացում.**

Ամբողջ օրվա ընթացքում խցանումները զգալիորեն ազդում են հանրային տրանսպորտի երթևեկության ժամանակի, սպասարկման որակի՝ և հուսալիության վրա՝ առաջացնելով ուղևորությունների անկանխատեսելի տևողություններ և նվազեցնելով ուղևորների վստահությունը ծառայության նկատմամբ

4

**Հանրային տրանսպորտից աճող կախվածություն.**

Միջանցքն ունի հանրային տրանսպորտից կախված ուղևորների անհամաչափ բարձր մասնաբաժին

5

**Անվտանգության և ուղևորների փորձառության վատ պայմաններ.**

Հանրային տրանսպորտի կանգառների վատ պայմանները կարող են նվազեցնել ուղևորների կողմից դրանցից օգտվելու ցանկությունը: Հարմարությունները հաճախ բացակայում են կամ գտնվում են վատ վիճակում՝ ստեղծելով սպասման ոչ անվտանգ կամ անհարմար պայմաններ և հանգեցնելով բացասական փորձի կամ փոխազդեցությունների

# Նախագծի զարգացումը

## ՎԱՂ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### 2017-2021

- BRT տեխնիկական ուսումնասիրություն (փետրվար, 2017 թ.)
- Երկաթուղային համակարգի փոխակերպման իրագործելիության ուսումնասիրություն (փետրվար, 2019 թ.)
- Նախնական բնապահպանական համայնքային գործընկերության ծրագիր և համայնքի իրազեկման աշխատանքներ (հունվար, 2021 թ.)

## ՆԱԽԱԳԾԻ

### 2023-2025

- Իրականացվել է շրջակա միջավայրի ուսումնասիրություն՝ BRT-ին աջակցելու համար
- Ծրագիրը ներառում է ամբողջ օրվա ընթացքում գործող, երթուղու ամբողջ երկայնքով կողային գոտիով ընթացող BRT՝ բարելավված անվտանգությամբ կանգառներով և բարեկարգված հետիոտնային անցումներով
- Ծրագիրը հաստատվել է համայնքի և շահագրգիռ կողմերի լայն աջակցությամբ և դրական արձագանքներով (մարտ, 2025 թ.)

## ՆԱԽԱԳԾՈՒՄ

### 2025-2026

- Վաղ նախնական նախագծումն ավարտվել է՝ Լոս Անջելես քաղաքի և վարչաշրջանի հետ համակարգմամբ (դեկտեմբեր, 2025 թ.)
- Ներկայումս գտնվում է վերջնական նախագծման փուլում՝ կենտրոնանալով ավտոբուսային գծերի (2027 թ. վերջ) և BRT կանգառների ավարտման վրա մինչև 2028 թ. կեսը

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### 2027-2028

- Շինարարական աշխատանքները ներառում են ճանապարհածածկի վերանորոգում և ավտոբուսային գծերի գծանշում
- BRT կանգառների կառուցում և տեղադրում, ինչպես նաև հետիոտնային և ADA-ի (Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենք) այլ բարեփոխումներ

## BRT-Ի ԲԱՑՈՒՄ

### 2028

- Համայնքի լայն աջակցությունը կարևոր դեր ունեցավ Խորհրդի կողմից ծրագրի հաստատման գործում՝ ապահովելով BRT նախագծի իրականացումը մինչև 2028 թ. սկիզբը

# Միջանցքի ակնարկ

Տարածվում է մոտավորապես 12.4 մղոն՝ Sunset Bl.-ից 120th St.

Լոս Անջելես վարչաշրջանի ամենածանրաբեռնված ավտոբուսային միջանցքը՝ օրական 38,000 նստեցումներով:

Միանում է Metro-ի 4 երկաթուղային գծերի և մի քանի այլ ավտոբուսային գծերի՝ բարելավելով տարածաշրջանային շարժունակությունը և կապը 2028 թ. Խաղերի հիմնական վայրերից մեկի հետ:

Սպասարկում է բազմաթիվ կարևոր գործունեության կենտրոններ, այդ թվում՝ մի շարք առողջապահական, կրթական (88 դպրոց, որոնցից 52-ը՝ GO Pass դպրոցներ), մշակութային և հավատքի վրա հիմնված (375) հաստատություններ:

Խիստ ծանրաբեռնված երթևեկություն՝ ճանապարհային գոտու տարբեր լայնություններով (55-ից մինչև 160 ֆուտ՝ եզրաքարից մինչև եզրաքար): Ամենածանրաբեռնված հատվածներն ունեն ուղևորների ամենաբարձր քանակը:

Խիտ բնակեցված, բազմազան բնակչությամբ և հանրային տրանսպորտից բարձր կախվածությամբ միջանցք:

# Համայնքի ներգրավման ամփոփում

**VERMONT-Ի ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

Ներգրավվել է ավելի քան **26,000** անձ իրազեկման աշխատանքների միջոցով:

**Համայնքային գործընկերության ծրագիր**

40 համայնքային կազմ.-երի (Community-Based Organization, CBO) և հավատքի վրա հիմնված կազմ.-երի (Faith-Based Organization, FBO) հետ գործընկերությունները նպաստեցին իրազեկման ընդլայնմանը և BRT նախագծի վերաբերյալ կարծիքների հավաքագրմանը

**Ընտրված պաշտոնատար անձինք և Ինստիտուցիոնալ ճեպազրույցներ**

Իրականացվել է 30 **ճեպազրույց**

**Թաղային խորհրդի ներկայացումներ**

22 Թաղային խորհրդի ներկայացումներ՝ իրազեկման աշխատանքներն ու ծրագրի ջանքերն ընդլայնելու համար

**Համայնքային միջոցառումներ**

Մասնակցել է ավելի քան 35 համայնքային և մշակութային միջոցառումների

**Աշխատաժողովներ, համայնքային հանդիպումներ, զրույցներ**

- Մշակութային կարիքների և հավասարության վերլուծության 3 աշխատաժողով
- Ինտերակտիվ կանգառների ձևավորման 7 աշխատաժողով
- Հանրային տրանսպորտի ուղևորների 371 հարցում (10 հիմնական կանգառ)

**SB 922 հանրային հանդիպումներ**

Հանդիպումներ՝ Կալիֆոռնիայի Սենատի 922-րդ օրինագծի (California Senate Bill 922, SB922) համաձայն՝ Կալիֆոռնիայի շրջակա միջավայրի որակի մասին օրենքով (California Environmental Quality Act, CEQA) բնապահպանական թույլտվության համար անհրաժեշտ զեկույցների վերաբերյալ հանրային կարծիքներ հավաքագրելու համար

- 325 մասնակից (ընդհանուր՝ առկա և առցանց մասնակցությամբ)
- 270 այցելություն ծրագրի արդյունքների վերաբերյալ վիրտուալ բաց դռների օրվա ընթացքում

# Մենք լսեցինք ձեզ

- Աշխատանքների նպատակն է արագացնել շուրջօրյա ավտոբուսային գծերի ներդրումը
- Շուրջօրյա ավտոբուսային գծերը կբացվեն մինչև 2027 թ. վերջը
- Վերացնում է ավտոբուսային գծերի բազմաթիվ դասավորությունների գծանշման անհրաժեշտությունը
- Տեղական ավտոբուսները կարող են օգտվել ավտոբուսային գծերից դրանց տեղադրումից հետո
- Ավտոբուսային գծերը կնպաստեն կանգառների արդյունավետ կառուցմանը
- BRT կանգառների շինարարությունը կավարտվի մինչև 2028 թ. կեսը՝ 2028 թ. ամառային Օլիմպիական և Պարալիմպիկ խաղերին ժամանակին պատրաստ լինելու համար

# Հիմնական BRT տարրերը

- Եզրաքարային կայանատեղիներին հարակից երթևեկության գոտին վերափոխում է միայն ավտոբուսների համար նախատեսված գոտու
- Ներառում է մոտավորապես 12 մղոն երկարությամբ շուրջօրյա առանձնացված կողային ավտոբուսային գծեր
- 26 բարեկարգված կանգառ՝ 13 խաչմերուկային վայրերում՝ հարմարավետ տաղավարներով և ուղևորների համար նախատեսված մի շարք հարմարություններով, այդ թվում՝
    - Բարելավված լուսավորություն՝ անվտանգության և ապահովության բարձրացման համար
    - Հանրային տրանսպորտի տեղեկություններ (հաջորդ ավտոբուսի ժամանման ցուցադրումներ, քարտեզներ)
    - Ավտոբուսի նստարաններ, աղբամաններ, հանրային արվեստի աշխատանքներ
    - Անվտանգության այլ հնարավոր տարրեր, օրինակ՝ արտակարգ իրավիճակների կանչի կոճակներ
- Այլ բարեկարգումները ներառում են բարելավված հետիոտնային անցումներ՝ ավելի բարձր տեսանելիության և հետիոտների անվտանգության ապահովման համար
- Կանգառային հարթակներ ավտոբուսային կանգառների մեծ մասում՝ հետիոտնային տարածքն ընդլայնելու և անցումների երկարությունը կրճատելու համար՝ ապահովելով ավելի անվտանգ անցումներ
- Գծանշումների վերականգնում և/կամ ավտոբուսային գծերի ծածկույթի վերանորոգում

# Metro-ի գործունեությունը 2024 թ. դեկտեմբերից ի վեր

**28 մարտի, 2025 թ.**

- Metro-ի խորհուրդը հաստատեց CEQA SB922-ը և 12.4 մղոն երկարությամբ կողային երթևեկությամբ BRT նախագիծը՝ որպես Տեղական մակարդակով նախընտրելի այլընտրանք (Locally Preferred Alternative, LPA)

**13 նոյեմբերի, 2025 թ.**

- Ստացել է Կատեգորիկ բացառման (Categorical Exclusion, CE) հաստատում՝ Շրջակա միջավայրի քաղաքականության ազգային օրենքի (National Environmental Policy, NEPA) շրջանակում բնապահպանական թույլտվության համար

**1 դեկտեմբերի, 2025 թ.**

- Ավարտվել է նախնական ինժեներական նախագծման 30%-ը

**26 փետրվարի, 2026 թ.**

- Կնքվել է պայմանագիր Շինարարության կառավարչի/Գլխավոր կապալառուի (Construction Manager/General Contractor, CMGC) համար

**Ընթացիկ**

- Վերջնական նախագծման շինարարական փաստաթղթեր՝ Լոս Անջելես քաղաքի և վարչաշրջանի հետ համակարգմամբ
- Նախաշինարարական աշխատանքներ

# Ավտոբուսային գծերի միջոցով բարելավված անվտանգություն և երթևեկության կազմակերպում

Vermont-ի անվտանգության բարձրացման վերաբերյալ համայնքի հարցմանն ի պատասխան՝ Նախագծում, ի լրումն լայն տեսանելիությամբ հետիոտնային անցումների (որոնք բարելավում են հետիոտների տեսանելիությունը) և կանգառների ընդլայնված հարթակների (որոնք կրճատում են փողոցն անցնելու համար անհրաժեշտ հեռավորությունը), այժմ ներառվել են նոր ձախ շրջադարձի գոտիների (left turn, LT) ավելացում, որոշ առկա ձախ շրջադարձի գոտիների երկարացում և չկարգավորվող խաչմերուկներում Gage Av.-ի և Wilshire Bl.-ի միջև շուրջօրյա ձախ շրջադարձերի սահմանափակումների կիրառում (երկու ուղղություններով) հետագայում **բարելավելու անվտանգությունն ու երթևեկությունը**

- Կանխում է ձախ շրջադարձ կատարող մեքենաների կողմից ուղիղ երթևեկության ընդհանուր գոտու արգելափակումը
- Նվազեցնում է մեքենաների կողմից հարակից ավտոբուսային գոտի մուտքի հավանականությունը՝ կանգնած երթևեկությունից խուսափելու համար
- Բարձրացնում է հետիոտների և տրանսպորտային միջոցների անվտանգությունը՝ ձախ շրջադարձերը կենտրոնացնելով այն վայրերում, որտեղ առկա են լուսացույցներ կամ հատուկ գոտիներ
- Ընդհանուր 13 նոր և 10 երկարացված ձախ շրջադարձի գոտի, ինչպես նաև չկարգավորվող վայրերում ձախ շրջադարձի 48 շարժման սահմանափակում (դեպի Vermont ձախ շրջադարձերը կպահպանվեն)



| Բարելավման տեսակը | Դեպի հյուսիս | Դեպի հարավ | Ընդհանուր |
|---|---|---|---|
| Նոր ձախ շրջադարձի գոտիներ (առաջարկվում է) | 6 | 7 | 13 |
| Առկա ձախ շրջադարձի գոտիների ընդլայնումներ | 4 | 6 | 10 |
| Ձախ շրջադարձի սահմանափակումներ | 21 | 27 | 48 |

# Նոր ձախ շրջադարձի գոտու օրինակ

Առկա վիճակ



Ժամանակային սահմանափակմամբ կայանատեղի

Առանց ժամանակային սահմանափակման կայանատեղի

Հետագա վիճակ




Առանց ժամանակային սահմանափակման կայանատեղի

Նոր ձախ շրջադարձի գոտի

Քարշակմամբ տեղափոխում, Կայանելն արգելվում է (կարմիր եզրաքար)

# Առկա ձախ շրջադարձի գոտիների ընդլայնման օրինակ

Առկա վիճակ



Առկա շրջադարձի գոտի

Հետագա վիճակ



Ընդլայնված ձախ շրջադարձի գոտի

Քարշակմամբ տեղափոխում, Կայանելն արգելվում է (կարմիր եզրաքար)

# Նոր ձախ շրջադարձի գոտու սահմանափակման օրինակ

Առկա վիճակ



Առկա կայանատեղիում
փոփոխություններ չկան

Հետագա վիճակ




Ձախ շրջադարձն
արգելող նոր նշան

Այսօր թույլտվություն ստանալու դեպքում, ձախ
շրջադարձի շարժը դեպի Vermont կպահպանվի:

# Կայանատեղիի վերլուծություն

Առաջարկվող փոփոխությունները պահպանում են Vermont-ում փողոցային կայանատեղիների **92%-ը**՝ ընդամենը 2% փոփոխությամբ:

## Փողոցային կայանատեղիներ

| | Առկա տեղերի քանակը | Փոփոխված կայանատեղիների սկզբնական հաշվարկված թիվը | Մնացած կայանատեղիների սկզբնական հաշվարկված տոկոսը | Փոփոխված կայանատեղիների հաշվարկված արդիացված թիվը | Մնացած կայանատեղիների արդիացված հաշվարկված տոկոսը |
|---|---|---|---|---|---|
| Հյուսիսային | 478 | 63 | 87% | 64 | 87% |
| Կենտրոնական | 631 | 72 | 89% | 108 | 83% |
| Հարավային | 1,157 | 11 | 99% | 11 | 99% |
| Ընդհանուր | 2,266 | **146** | **94%** | **183** | **92%** |




Հեռացվել է 64 կայանատեղի
Պահպանվել է 414 կայանատեղի
**87%-ը** պահպանվել է

Հեռացվել է 108 կայանատեղի
Պահպանվել է 523 կայանատեղի
**83%-ը** պահպանվել է

Հեռացվել է 11 կայանատեղի
1,146 կայանատեղի պահպանվել է
**99%-ը** պահպանվել է

N

Vermont-ի տարանցիկ միջանցք

Ուսումնասիրության տարածք

# Բարելավված կանգառի նախագծում

- 2024 թ. մայիս/հունիս՝ անցկացվել են մի շարք կանգառների ձևավորման աշխատաժողովներ՝ առաջարկվող BRT կանգառների և դրանց հարմարությունների վերաբերյալ կարծիքներ հավաքելու համար
- Անվտանգությունը համայնքի հիմնական մտահոգություններից էր, ուստի կանգառներում բարելավված լուսավորությունը կարևոր էր՝ գիշերային ժամերին ավելի լավ տեսանելիություն և անվտանգություն ապահովելու համար
- Այլ պահանջվող հարմարություններից էին ավտոբուսի նստարանները, աղբամանները, հանրային տրանսպորտի տեղեկությունները (հաջորդ ավտոբուսի ժամանման ցուցադրումներ, քարտեզներ), հանրային արվեստի աշխատանքները և անվտանգության այլ հնարավոր բաղադրիչները
- Ստացված կարծիքների հիման վրա մենք աշխատել ենք կանգառների ավելի կատարելագործված նախագծման ուղղությամբ

# Բարելավված կանգառի փորձառություն՝ Wilshire




- Կանգառների ծածկեր
- Նստատեղեր
- Թվային էկրաններ
- Բարելավված լուսավորություն
- Իրական ժամանակի հանրային տրանսպորտի տեղեկատվություն
- Հանրային արվեստ
- Աղբամաններ

# Բարելավված կանգառի փորձառություն՝ Century

Vermont Ave. & Century Blvd. (Դեպի հարավ)

- Կանգառների ծածկեր
- Նստատեղեր
- Թվային էկրաններ
- Բարելավված լուսավորություն
- Իրական ժամանակի հանրային տրանսպորտի տեղեկատվություն
- Հանրային արվեստ
- Աղբամաններ

# Նախագծի ժամանակացույց

**Մենք այստեղ ենք**

## Սկիզբ 2026 թ.

- Ընտրված գլխավոր կապալառու
- Շինարարական գծագրերի մշակում
- Գործակալության համակարգում
- Երկրատեխնիկական հետազոտություն
- Ստորգետնյա հետազոտություն

## Գարուն 2026 թ.

- Նախաշինարարական աշխատանքներ
- Երկրատեխնիկական կատարված հետազոտություն
- Շինարարական գծագրերի առաջխաղացում

## Ամառ 2026 թ.

- Համայնքի հետ տեղեկատվական հանդիպումներ
- Շարունակական նախաշինարարական աշխատանքներ
- Կոմունալ ենթակառուցվածքների հետազոտություն

## Աշուն 2026 թ.

- Կոմունալ ենթակառուցվածքների կատարված հետազոտություն
- Շինարարության սկիզբ

## Գարուն 2028

- Շինարարության ավարտը նախատեսվում է մինչև 2028 թ. Օլիմպիական և Պարալիմպիկ խաղերի մեկնարկը

# Առաջիկա շինարարական աշխատանքներ

## ԿԱՏԱՐՎԱԾ Է

Գետնաթափանց ռադարի միջոցով հետազոտություն

Երկրատեխնիկական հետազոտություն

## ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է

Կոմունալ ենթակառուցվածքների հետազոտություններ՝ Ներառում է ճանապարհի վրա փոսերի փորում՝ ստորգետնյա կոմունիկացիաների տեղորոշման համար: Ստորգետնյա կոմունիկացիաների տեղորոշումից հետո փոսը կրկին ծածկվում է:

## ԱՌԱՋԻԿԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ավտոբուսային գոտու ճանապարհածածկի բարեկարգում

Ճանապարհային գծանշումների փոփոխություն
Ճանապարհածածկի վրա գծանշումների կատարում՝ երթևեկությունն ուղղորդելու համար

Կոմունալ ենթակառուցվածքների տեղափոխումներ՝ Ստորգետնյա ենթակառուցվածքների բարելավում

# Առաջիկա շինարարական աշխատանքների ազդեցություններ

Շինարարության ընթացքում կգործեն երթևեկության վերահսկման միջոցներ

Տեղական ձեռնարկությունները կտեղեկացվեն նախքան շինարարության մեկնարկը

Հնարավորության դեպքում կպահպանվի հետիոտնային մայթերի, անցումների և ձեռնարկությունների հասանելիությունը:

Անմիջական աշխատանքների տարածքում կտեղադրվեն ժամանակավոր կայանման սահմանափակման վերաբերյալ ցուցանակներ:

Որոշ աշխատանքների համար անհրաժեշտ կլինեն գիշերային շինարարական աշխատանքներ:

Metro-ի ավտոբուսների կանգառները կարող են տեղափոխվել, և երթևեկության գծերը կարող են փոխվել: Metro-ի ծառայությունների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների համար զանգահարեք **323.GoMetro**

# Համայնքի ներգրավվածությունը շինարարության ընթացքում

- Շինարարության ընթացքի վերաբերյալ համայնքի կանոնավոր իրազեկում
- Համայնքի հետ համագործակցության շարունակում՝ CBO/FBO գործընկերների միջոցով
- Շինարարական աշխատանքների վերաբերյալ շարունակական տեղեկացում
  - Դռնեդուռ իրազեկում
  - Էլ. տեղեկագրերի զանգվածային ուղարկում
  - Շարժական իրազեկման միջոցառումներ
  - Անհատական շինարարական համակարգում
  - Բիզնեսի աջակցություն (Eat Shop Play)

# Բիզնեսների ներգրավման և ազդեցությունների մեղմացման ծրագրեր




- Մարքեթինգային աջակցությունը հասանելի է ծրագրի երթուղու ¼ մղոն շրջակայքում գտնվող տեղական բիզնեսների համար
- Մասնակցությունն անվճար է
- Առավելություններ տեղական բիզնեսների համար՝
    1. Անվճար թվային մարքեթինգի վեբինարների և խորհրդատվության հասանելիություն
    2. Կարող է լրացուցիչ խթանվել Metro-ի տպագիր և թվային արշավներում

Ավելին իմանալու համար այցելեք **metro.net/eatshopplay:**

# Metro-ի արվեստի ծրագրի քաղաքականություն

- Metro-ի արվեստի ծրագրի քաղաքականությունը նախատեսում է տարանցիկ շինարարության ծախսերի 0.5%-ի հատկացում նախագծի հանրային արվեստի համար
- Բոլոր կանգառներում կտեղադրվեն ճարտարապետական ոգուն և տվյալ վայրին համապատասխան արվեստի աշխատանքներ
- Նկարիչները կընտրվեն բաց և մրցակցային գործընթացի միջոցով
- Հնարավորություններ
  - Metro.net/art
  - [Subscribe at https://art.metro.net/art-opportunities/main/](https://art.metro.net/art-opportunities/main/)



# Հարց ու պատասխան

Metro

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# Տեղեկացված մնացեք այս նախագծի վերաբերյալ

**Նախագծին վերաբերող հարցերի/մեկնաբանությունների համար՝**

213.922.2846

*vermontcorridor@metro.net*

*metro.net/vermont*

*@metrolosangeles*

*losangelesmetro*

**Metro-ի Արվեստի ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար՝**

*@metro.art.la*

*metro.net/art*

*bit.ly/metro-art-newsletter*

*Facebook.com/metro.art.la*

*Metro արվեստի կայք*

*Գրանցվեք մեր տեղեկագրին*